չինեցին և ամրացուցին զայն քարամբք և կրիւ ըստ պայմանին եւ խոստման իւրեանց. 'ի ՀԵ Մուհարրէմ ամսոյ՝ ՉՄԶ (1529)։

Իսկ Յովհաննէս եպիսկոպոս 'ի կենդանութեան իւրում ինքնայօժար կամօք հրաժարեցաւ յիշխանութենէ Պատրիարքութեան, և հաճութեամբ միաբանաց յանձն արար զայն Աստուածատուր եպիսկոպոսի Մարտինցւոյ. տուեալ 'ի ձեռս նորա զկահ և զկարասիս և զանօթս, զկառավարութիւն վանօրէից և կալուածոց, և որ ինչ միանգամ էր 'ի ձեռս իւր։ Նոյնպէս և Խաչատուր եպիսկոպոս, որ վերատեսուչ (Միւթէվելի) էր վանաց, հրաժարեալ 'ի պաշտօնէ իւրմէ, յանձն արար զայն 'ի ձեռս Աստուածատրոյ։ Ապա ժողովեալ միաբանաց գրեցին գիր վկայութեան եւ հաստատութեան, արկին 'ի նա ամենեքեան ձեռս, զի հաճութեամբ ընկալան զհրաժարումն Յովհաննու և զընտրութիւն Աստուածատրոյ, յետ կարգաւորելոյ զամենայն 'ի միջի իւրեանց, էառ Յովհաննէս եպիսկոպոս զգիրն զայն և զԱստուածատուր՝ իջին 'ի դատարան, եւ կացուցին 'ի վկայ զերկուս երեւելիս 'ի վաճառականացն այլազգեաց, մատուցեալ Յովհաննու զգիր միաբանութեան յայտ արար յատենի անդ զհրաժարումն իւր և զընտրութիւն Աստուածատրոյ լինել Պատրիարք ազգին Հայոց Յերուսաղէմ, յանձն արարի սմա ասէ՝ հաճութեամբ միաբանաց զկառավարութիւնս և զամենայն կահս վանաց Ս. Յակոբայ, ըստ տեսչութիւն վանօրէից և կալուածոց, և ես այսուհետեւ չունիմ իրաւունս լինել ձեռնամուխ յիրս ինչ վանաց, ոչ հակառակիլ Պատրիարքին և ոչ իջուցանել զնա յաթոռոյն մինչեւ ցմահ նորին, և ո՛չ որ եւ իցէ փոքր առթիւ յարուցանել վէճս 'ի վերայ նորա, եւ կամ ընդդէմ գինիլ իշխանութեան նորին։ Յետ այնորիկ եհարց դատաւորն զԱստուածատուր եպիսկոպոս և ասէ՝ դու եւս յօժարութեամբ սրտի ընկալա՞ր զիշխանութիւն Պատրիարքութեան, եւ զամենայն զոր միանգամ յայտ արար յատենի առա Յովհաննէս եպիսկոպոս. ետ պատասխանի եւ ասէ, ընկալեալ եմ զամենեսեան, որպէս յայտ արարեալ ծանոյց Յովհաննէս, և վկայ կացին բանիցն երկոքին այլազգիքն, և դատաւորն գրեաց յետկար, և հաստատեաց զՊատրիար-